# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

## ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 1755
10 MAY 2021
Կից      Նշում

«17» մայիս 2021թ.                No 1816 - Ա

### ԼԵՀԱՍՏԱՆԻ «ՓԻ-ՓԻ-ԷՖ "ՀԱՍԿՈ-ԼԵԿ" Ս.Ա., Փ. ԺՄԻԳՐՈԴԶԿԱ 242 Ե, 51-131 ՎՐՈՑԼԱՎ» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ «ՓԻ-ՓԻ-ԷՖ "ՀԱՍԿՈ-ԼԵԿ" Ս.Ա., Փ. ԺՄԻԳՐՈԴԶԿԱ 242 Ե, 51-131 ՎՐՈՑԼԱՎ, ԼԵՀԱՍՏԱՆ») «ՖԼԵԲՈՏՈՆ (ԴԻՈՍՄԻՆ) ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱՊԱՏ 1000ՄԳ; (30/1X30) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ԴԵՂԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 51-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 29.04.2021 թվականի N 0103043421 բացասական եզրակացությունը՝ Լեհաստանի «Փի-Փի-Էֆ "Հասկո-Լեկ" Ս.Ա., փ. Ժմիգրոդզկա 242 Ե, 51-131 Վրոցլավ» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «Փի-Փի-Էֆ "Հասկո-Լեկ" Ս.Ա., փ. Ժմիգրոդզկա 242 Ե, 51-131 Վրոցլավ, Լեհաստան») «Ֆլեբոտոն (դիոսմին) դեղահատեր թաղանթապատ 1000մգ; (30/1x30) բլիստերում» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ թիվ 19862 առ 29.04.2021թ. փորձագիտական բացասական եզրակացությունը, առ այն, որ լիարժեք փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացված չեն.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել Լեհաստանի «Փի-Փի-Էֆ "Հասկո-Լեկ" Ս.Ա., փ. Ժմիգրոդզկա 242 Ե, 51-131 Վրոցլավ» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի

Մուտ. 17.05.21 ժ. 16⁴⁰ Ռ.

իրավատեր՝ «Փի-Փի-Էֆ "Հասկո-Լեկ" Ս.Ա., փ. Ժմիգրոդզկա 242 Ե, 51-131 Վրոցլավ, Լեհաստան») «Ֆլեբոտոն (դիոսմին) դեղահատեր թաղանթապատ 1000մգ; (30/1x30) բլիստերում» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2.ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

17.05.2021

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157